

գիր ընծայութեան առ Միւէզգէտտին⁵² սուլտան Մելիսինեայ, ընդ որոյ իշխանութեամբ էր աթոռ պատրիարքացն Ասորոց, եւ հաստատեալ իշխանութեանն՝ գնաց անդր Յեսու. եւ դարձեալ եկեալ եկաց առ ժամանակ մի եւս ՚ի Գաւիկաթի վանսն, զոր Լեւոնի շնորհեալ էր նմա. ուր եւ յետ ժամանակաց առ Հեթմով տեսաք (յէջ 221) կացեալ ա՛յլ պատրիարքունս եւ մետրապօլիտս Ասորիս եւ յապահովեալս անդ:

⁵² Ասսեմանի (Մատենադարան Արեւել. Բ. 231) առ Իզգէտտին սուլտան Կեսարիոյ ասէ գրեալ Լեւոնի. թերեւս յետ պաշարման քաղաքին եւ հաշտութեանն ընդ սուլտանին:–Նոյն՝ աւանդէ այլուր, ըստ հին գրչաց Ասորոց, վասն վանացն Գաւիկաթայ (զոր սակաւ ինչ այլայլութեամբ յիշեցաք ՚ի տեղագրութեան Սոյ, յէջ 221), եթէ շինեալ իցէ անդստին ՚ի Զ դարու, յԱքրոդեմեայ մեծագահ եպիսկոպոսէ Ասորոց՝ ձեռնադրելոյ ՚ի մերոյս սակաւածանօթ Քրիստափորէ կաթողիկոսէ՝ կացելոյ յետ Գիւտի: